Կաթողիկոսական խնդիրը Գէորգ Դի մահուանից յետոյ դարձաւ հայութեան համար յոյսերի և յուսահատութեան, դառնութիւնների և ուրախութեան, հայրենասիրութեան և դաւադրանքների մի հիմնաքար . . . . Որքան ելեւէջեր, որքա՛ն ցնկութիւններ, որքա՛ն ձգտումներ, որքիսի ճնշումներ, որպիսի և որքա՛ն փոփոխութիւններ և խառնակութիւններ Մայր-Աթոռի ջրոս կողմը, և աւելի հեռուն . . . . Բայց թողնենք այդ բոլորը, այժմեան համար չէ, սրանով ես կամենում են միայն լցուցանել ձեր ցանկութիւնը՝ խօսելով Վեհ. Մակարի դպատեան մասին։— Տփխիս մրտնելուց յետոյ Երեւանի մէջ քանի մի անձինք պատրաստութիւնների յետեւից ընկան ընդունելու Վեհ. Մակարին։ Պաշտօնապէս յայտնուեցաւ որ Վեհ. Մակարը Երեւան պիտի մտնէ նոյեմբերի 28ին։ Տեղական իշխանութիւնները հրահանգ ստացան Կովկասեան կառավարչապետից պատրաստ լինելու։ Երեւանի քաղաքագլուխ հայազգի Գեղամեանը մի քանի անձանց հետ՝ Վեհ. Մակարին աւելի պատուելու համար մտածեցին մի ճաշկերոյթ պատրաստել, և հրապարակի վերայ, որտեղից պիտի անցնէր գնացքը՝ կանգնեցնել մի «Ցաղիկան Կամար»։ Վեհ. Մակարը պիտի դուրս գար Տփխիսից ուրբաթ նոյեմբերի 23ին. պիտի երկաթուղու գնացքով հասնէր Աղստաֆա, դիմէրէր այդ տեղ, միւս օրը պիտի դիմէրէր Դիլիջան, յետոյ Սուխոյ Ֆոնդան. իսկ դորա յաջորդ օրը պիտի մտնէր Երեւան։ Այդպէս էլ եղաւ։ Կառավարութեան կողմից հրամայած էր ճանապարհի մօտ գտնուող գիւղերին ընդ առաջ ելնել։ Կառավարութեան կողմից ուղեկցում էր Վեհ. Մակարին ներգործական խորհրդական Ամբարդանեան, Տփխիսից Վեհ. Մակարին ուղեկցում էին Տփղիսի առաջնորդ Արիստակէս Սրբազան, Սուքիաս եպիսկոպոս Պարզեան՝ Ատարանի առաջնորդը, Յովսէփիմ եպիսկոպոսը՝ անդամ Սինոդի, Սագինեան եպիսկոպոսը առաջնորդ Ղարաբաղի, Սինոդի պրոկուրոր Տէր-Յովսէփեանը։ Արիստակէս Սրբազանը Աղստաֆից դարձաւ յետ։ Յովսէփիմ և Սագինեան եպիսկոպոսները էջմիածնից ուղարկուած էին Տ. Մակարին հրաւիրելու և առաջնորդելու ի Ս. Էջմիածին. դաքա և Վեհ. Մակարին Կիշլինեւից ուղեկցել են մինչեւ Էջմիածին։ Էջմիածին եկաւ Վեհ. Մակարի հետ Սուքիաս եպիսկոպոսը։— Երկուշաբթի օրը, երբ պիտի մտնէր Երեւան Վեհ. Մակարը, կառավարչական չրջաններում արդէն պատրաստ էին։ Նահանգապետի կողմից ընդ առաջ գնաց Էջմիածնի հաշտարար միջնորդ Տէր-Յովսէփեանը (Պրոկուրոր Տէր-Յովսէփեանի եղբայրը)։ Երեւանի առաջնորդ Սուրէնեան Սրբազանը հինգշաբթի օրից ընդ առաջ էր գնացել դիմաւորելու Վեհ. Մակարին Սեւանովկա գիւղում։ Ցանկացած ճաշկերոյթը, որի համար երկու չաբաթուց ընթացքում հաւաքել են չորս հարիւր յիսուն և բուրլի, տեղի չունեցաւ, պի Տփխիսից Վեհ. Մակարը կարելի էր որ ոչինչ ճաշկերոյթի տեղի չունենայ։ Այդ պատճառով քաղաքագլուխ Գեղամեանը աշխատեց որ յաղթական կամարը փառաւոր լինի գէթ։ Վեհ. Մակարը Երեւան պիտի մտնէր ժամի 11 1/2ին։ Եղանակը բաւականին պարզ էր, այդ պատճառով Երեւանի կանանց դասը անգամ դուրս էր եկել տեսնելու լինելիքը։ Գլխաւոր փողոցի վրայ հրամայուած էր դրօշակներ կախել։ Հրամայեցին փակել խանութները։— Ամեն հասակի, սեռի և ազգաբանութեան ներկայացուցիչներ հաւաքուած գլխաւոր փողոցի երկու կողմը հարիւրներեակ սպասում էին Վեհ. Մակարի գալուն։—Բազմութեան մեծ մասը գտանվում էր այնտեղ, որ տեղ կանգնեցրած էր ցաղիկան կամարը։—Կամարը զարդարուած էր կարմիր մահուտով, բնական տերեւների հիւսերով և գոյնզգոյն դրօշակներով։ Կամարի ճակատին տեղաւորած էր «Մ» տառը։ Ժամը 10ին Երեւանի Հայոց թեմական դպրոցի աշակերտները իրանց ուսուցիչներով եւ հոգաբարձուներով եկան եւ բռնեցին կամարի մօտ փողոցի երկու կողմը։ Ռուսաց օրիորդաց դպրոցի աշակերտուհիք բռնեցին նոյն կամարի միւս կողմը։ Հայոց Գայանեան օրիորդաց փակուած դպրոցի աշակերտուհիները բաւականաւորէին ի հարկէ ոչ-պաշտօնական կերպով հեռուից նայելով։— Ժամի 10ին Վեհ. Մակարի առաջ հասաւ Սրբազան Սուքիասեանը, և քաղաքի հոգեւորականութեան հետ միասին պարտաւոր պատշաճ կերպով ընդ առաջ ելաւ. հոգեւորականութիւնն էլ սպասում էր կամարի մօտ։ Քաղաքային վարչութեան անդամները և քաղաքագլուխը դիմաւորեցին քաղաքից դուրս։ Ժամը 11ին որոշուած տեղում սպասում էին Վեհ. Մակարին փոխ-նահանգապետը, ատիկանապետը, քաղաքագլուխը և քաղաքին վարչութեան անդամները։ Այդտեղ սպասում էր ճիաւոր զինուորների մի փոքրիկ վաշտ։ Ժամը տասնեմէկից քառորդ անցած երեւացին հեռուից մոտեցող կառքերը. առաջուից գալիս էր այն կառքը որի մէջ նստած էր Վեհ. Մակարը։ կառքի վրայ նստած էին երկու չաթիրներ իրանց համազգեստով։ Վեհ. Մակարի կառքին հետեւում էին եպիսկոպոսները և պաշտօնական անձինքը կառքերով։ Ուղեկցում էին և մի քանի ոստիկանական ատիճանաւորներ։— Հասնելով նշանակած տեղին՝ կանգ առաւ։ Կառքի պատուհանը բացուեցաւ. զինուորները պատուի ցոյց արեցին։ Ներկայ եղողները գլխարկները վերցնելով ողջունեցին։ Եւ առաջին անգամն եմ տեսնում Վեհ. Մակարին։ Վեհ. Մակարը ունի զուարթ դէմք, փոքրիկ աչքեր, հայկական քիթ, սպիտակ և կարճ մօրուք։ Առաջ անցաւ քաղաքագլուխ Գեղամեանը, և ես նոր իմացայ որ նա գըբարաւ լեզուով մի ճառ պիտի կարդայ։ Քաղաքագլուխը իւր ճառի մէջ ուրախութիւն յայտնելով որ Վեհ. Մակարը արժանացաւ Ս. Լուսաւորչի Գահին, իւր և քաղաքի կողմից շնորհաւորեց գալուստը համբուրելով Վեհ. Մակարի աջը։ Ապա ներկայացրին քաղաքի կողմից աղ և հաց։ Վեհ. Մակարը ընդունելով յայտնեց շնորհակալութիւն և օրհնեց։ Դորանից յետոյ կարդադրուեցաւ առաջ գնալը։ Կառքերը շարժուեցան փոշու ամպերի միջից։ Գնացքը բաց էր անում ձիաւորների խումբը. դրանից յետոյ Վեհ. Մակարի կառքից առաջից գնում էին երկու ձիաւոր քահանայներ՝ բռնած խաչ և գաւազան. ապա Վեհ. Մակարի կառքը, յետոյ պաշտօնական անձինքը, յետոյ քաղաքային վարչութեան անդամները։ Ժամը 11ին հասանք Երեւան։ Եկեղեցիներում զանգահարում էին, գլխաւոր փողոցի վերեւի մասերում՝ երեւում էին կտուրներում և պատուհաններում կանայք և աղջիկունք. փողոցը այդտեղ չէր զարդարած։ Հասնելով կամարին, կառքը կանգ առաւ։ Վեհ. Մակարը իջաւ կառքից և մտաւ ամկհովանու տակ սովորական աղօթքները ասելուց յետոյ և ապա կարգադրեցաւ շարժուիլ։ Գնացքը ուղղուեցաւ դէպի առաջնորդ արանական եկեղեցին Ս. Սարգիս։ Առաջուից գնում էին ձիաւոր զինուորները դէպի եկեղեցին։ Ապա թեմական դպրոցի աշակերտները։ Դորան հետեւում էր հոգեւորականութիւնը հարգաւոր իմն երգեցողութեամբ. ապա Վեհ. Մակարը ամկհովանու տակ։ Ամկհովանին բռնած ունէին տեղացի յայտնի հայերից՝ Պ. Պ. Վարդան Եղիազարեան, Ղորղանեան, Դէօկչայեան և Գեղամեան։ Վեհ. Մակարին թաղակցում էին ձախ կողմից Սրբազան Սուքիասեան և աջ կողմից Սուքիաս եպիսկոպոսը։ Յետեւից գնում էին Սագինեան Սրբազանը Կաթողիկոսական դաւազան ի ձեռին և Յովսէփիմ եպիսկոպոսը։ Վեհ. Մակարի առաջից գնում էին երկու սարկաւագներ՝ բռնած Կաթողիկոսական քօղը. երկու սարկաւագ էլ խնկարկում էին Վեհ. Մակարին։ Անցան կամարի տակից։ Ես վերեւ կամարի զարդարանքին նայելով մի վարկեան, մոռացայ ներսն և թափանցելով մեծ Հռոմի մէջ, յիշեցի մեծ-քաղաքի արժանաւոր որդոցը, որոց անձնուիրութիւնը և խնկելի գործերը վարձատրվում էին ժողովրդական անկեղծ համակրութիւններով, որի մի փոքր արտայայտութիւնն էլ յաղթական կամարները և այդպիսի բաներն էին։ Հռոմի պատմութեան գաղտնիքը կրկին պարզուեց մի րոպէ իմ մէջ. սակայն ես կրկին շուտով ելայ տեսայ Երեւանում և չրջապատող հասկանալի եղելութիւնների չրջանում։

Տան բոպէից յետոյ գնացքը հասաւ եկեղեցին, լսում էր միայն եկեղեցական երգեցողութիւն, փողոցի երկու կողմն էլ երեւում էր թուրք ազգաբնակութեան մեծ բազմութիւն, եկեղեցում կար նաև մեծ բազմութիւն թուրքերից և ռուսներից. սովորական աղօթքները վերջացնելէ յետոյ Վեհ. Մակարը բազմեց, տիրեց լռութիւն, Սրբազան Սուքիասեանը դարձաւ Վեհ. Մակարին գրաքառ մի ճառով(*)։ Դորա աւարտումից յետոյ Վեհ. Մակարը կանգնեց, ողջունեց ներկայ եղողներն և խօսեց հետեւեալը։—«Քաջ աւանդութեան Հայոց եկեղեցւոյ եպիսկոպոսութիւնը մարտիրոսութիւն է, եպիսկոպոսը մարտիրոս է. իսկ կաթողիկոսութիւնը բարոյական նահատակութիւն է. ես բարոյական նահատակ եմ եկեղեցւոյ և ազգի համար. կաթողիկոսութեան մէջ ոչինչ մխիթարիչ բան չկայ։ Ոչ ոք չէր երեւակայում, ոչ ոք չէր կարծում, ոչ ոք չէր սպասում որ ես կը լինիմ կաթողիկոս և կը բազմիմ Ս. Լուսաւորչի գահի վրայ, բայց այդ արդէն եղելութիւն է։ Ես ոչինչ մխիթարական բան չեմ տեսնում իմ առաջ, միակ բանն որ ինձ կարող է մխիթարել, այդ Հայոց փակեալ ուսումնարանների բացումն է, որի մասին յոյս ունիմ որ բարեխնամ կառավարութիւնը կը կատարէ մեր խնդիրքը, այն կառավարութիւնը որ միչտ դէպի մեզ ողորմած է եղել։ Ուրեմն մաղթենք որ Աստուած տայ մեր Օգոստափառ Կայսեր երկար կեանք, պահպանէ նորա գահը և պետութիւնը, մաղթենք երկար կեանք և յաջողութիւն Կովկասեան կառավարչապետին(*), մաղթենք երկար կեանք և նահանգապետներին, որոնք միջնորդ են մեր երկրի և կառավարութեան մէջ։ Խնդրենք ամենակարող Աստուծմէ որ հաստատ պահէ Էջմիածնին և Մայր Աթոռը, որ պահպանէ Հայ ժողովուրդը, հայ ուսումնարանների մէջ. ամէն։»—Դորան հետեւեց պահպանիչը. այդ բոլորից յետոյ Վեհ. Մակարը դուրս եկաւ եկեղեցուց և կրկին մտաւ ամկհովանու տակ. հոգեւորականութիւնը առաջնորդեց Վեհ. Մակարին դէպի Առաջնորդարան։ Առաջնորդարանի պատշգամից Վեհ. Մակարը դարձաւ և խաչակնքելով օրհնեց ժողովուրդին։ Այդտեղ դիմաւորեց Նրան Առաջնորդ արանում սպասող Նահանգապետն որ ողջունեց Վեհ. Մակարին եւ հարցուրեց այը. դրանից յետոյ Վեհ. փառն և իրեն չրջապատող անձինքը մտան Առաջնորդարանի դահլիճը, որոյ դուռը զարդարած էր և ճակատին գրած հետեւեալը. «Մակար Կաթողիկոս ամենայն Հայոց»։ Առաջնորդարանի դահլիճի մէջ ներկայացան Վեհ. Մակարին զանազան անձինք. Նահանգապետը հարցում էր Վեհ. Մակարին իւր ճանապարհորդութեան մասին. ներկայացան տեղացիներից շատերը. թուրք ազգաբնակութեան կողմից ներկայացաւ Երեւանի մէջ յայտնի Հաճի-Սէյիտ-Հասանը. Վեհ. Մակարը թարգմանի միջոցաւ յայտնեց նրան, որ ինքը շատ ցնկոնում է դրանից յետոյ էլ թուրքերը եւ հայերը չարունակեն ապրիլ սիրով և խաղաղ, ինչպէս դաւանութեամբ բաժնուած երկու եղբայրներ. ներկայացաւ և Պարսից հիւպատոսը։ Այս օրը ներկայացան Վեհ. Մակարին քաղաքի հայերից ցանկացողները, ի միջի այլոց պաշտօնապէս ներկայացան թեմական դպրոցի հոգաբարձուն և ուսուցիչները, որոց Վեհ. Մակարը ասաց,—«Թէեւ ծանօթ չեմ դպրոցի ներքինին և արտաքինին, բայց յոյս ունիմ որ լաւ կը լինի»։— Ընդունելութիւնների վերջանալուց յետոյ Վեհ. Մակարը առանձնացաւ հանգստանալու, որից յետոյ և Երեւանից մեկնեցին Էջմիածին ընդառաջ եկող քինոդականները։ Ամենքը գնացին իւրաքանչ գործին, ամենքն ընկաւ իւր սովորական գրութեան մէջ. երեկոյեան առաջնորդարանի բակում եւ այդտեղից հասարակական պարտէզը տանող փողոցի վրայ և պատրիզում ճրագալոյց կար։

Երեւանում Վեհ. Մակարը երկար չը մնաց, մի գիշերը բաւական համարեց. Տփխիսի մէջ, ասում են, գործերը ստիպեցին երկու չաբաթ մնալ։ Երեքշաբթի առաւօտեան ներկայացան քաղաքի հայ հոգեւորականները. մեր սովորական տիպ ներկայացնող քահանաները անկասկած հետաքրքիր էին. լսել էին որ Վեհ. Մակար առանձին ուշադրութիւն է դարձնելու հոգաբարձութեան վերայ։ Վեհ. Մակարը ընդունելով քահանայական դասը խօսաց հետեւեալը. «Խնդրէ, որ իմ օրով պիտի բարձրանայ հոգաբարձութիւնը, ես պիտի տամ հայ հոգեւորականին իւր կոչման արժանի դիրքը. սրանից յետոյ դուք պիտի առաջնորդէք ժողովրդին, դուք պիտի հովուէք ժողովուրդը, դուք պիտի լինիք առաջնորդող և ոչ առաջնորդուող։ Ձիրդ եղէք ձեր պարտաւորութիւնների մէջ. ես խոստանում եմ պիտի հետեւիմ ձեր պակասութիւններս և հիմիկուանից ասում եմ, ում որ ծանր է այդ կոչումը և պաշտօնը, կարող է հանել փարաքան և գնալ իւր դործին»։ Դորանից յետոյ արձակել է նոցա։— ժամի 10ին պատրաստութիւն տեսնուեցաւ այցելելու Նահանգապետին։ 10 1/2ին Վեհ. Մակարը իւր հետ միասին իրեն ուղեկցող եպիսկոպոսները և կառավարութեան ներկայացուցիչները, կառքերով հասան Նահանգապետի բնակարանին. առաջից գնում էին ձիաւոր քահանաներ և վարդապետներ՝ ձեռքին խաչ։ Նահանգապետը իւր բնակարանի դրան մօտ ընդունեց Վեհ. Մակարին։ Այդտեղ ներկայացան Վեհ. Մակարին տեղական քաղաքական և զինուորական վարչութիւնների ներկայացուցիչը և քաղաքային վարչութեան անդամը։ Վեհ. Մակարը ասել է Նահանգապետին, որ աչք ունենայ Էջմիածնի վրայ, որ աչք ունենայ միաբանութեան վրայ, խնամքով նայէ Երեւան քաղաքի, խնամքով նայէ իւր ձեռքի տակ գտնուող ժողովրդին։— Տեսութիւնը տեւեց մօտ 20 րոպէ։ Նահանգապետը մինչեւ կառքը ուղեկցեց Վեհ. Մակարին և սիրալիր հրաժեշտ տուաւ։—Այդ տեղից Վեհ. Մակարը ուղղակի ուղեւորեցաւ դէպի Էջմիածին, ժամի 11ից քիչ անցած։

(*) Այդ ճառը հրատարակեցինք մեր երեքշաբթի աւուր թուով։ Ծ. Խ.

ԶԱՆԱԶԱՆՔ

ՀԱՅՔ ԾԱՄԵՐԻԿՍ

Միացեալ Նահանգաց Գալիֆորնիայի Ֆրէզնօ քաղաքը գտնուող հայ գաղթականութեան վրայով հետեւեալ տեղեկութիւնները բուն իսկ իրենցմէ գրուած նամակներէ քաղուած են։

Գաւառին մէջ գտնուող Հայոց թիւը կը հասնի 410ի. Սան Ֆրանչիսկոյի մէջ կան երկու ընտանիք 16 անձերէ բաղկացեալ։ Ֆրէզնոյի Հայերն են 17 ընտանիք, որոնցմէ 5ը Մարդուանէն, 4ը Եոզոատէն, 3ը Կարիւէն, 2ը Կեսարիայէն, 1ը Մարաշէն, 1ը Արարկիրէն և 1ը Մաչէն։ Ասոնք ստացած են ընդ ամենը 200էն աւելի արտաքար երկիր, որ.ք են մշակելու։ Նաեւ քաղաքին մէջ ունին հող 50 բաժնէն աւելի, որոնցմէ 21ի վրայ տուն կառուցուած է։

Արհեստաւորներ կան, 3 դերձակ, 1 կին դերձակ, 1 ժամագործ, 1 կօշկար. այս 6 խանութներէն զատ կան, գրաշարներ, գործակատար, խոհարար, պտղավաճառ և ընդեղինավաճառ, 4 ջրմիկ կառքով վերեզակ, իսկ մնացեալք են հողագործ։

Հայ գաղթականք տարի ու կէս առաջ երբ եկան, ոմանք 1500 և ոմանք 2500 թալեռ պարտք ընել պարտաւորեցան, սակայն շուտով կարողացան իրենց պարտքերը վճարել. ընդհանուր առմամբ Հայեր շատ յառաջադէմ են և շատ չանցած պիտի հարըստանան։

Կարնեցի բարեկամ մը ըսած է թէ մէկ արտաքար ձմերուկին ու մէկ արտաքար ոռմպէղին 400 թալեռ առած է, որ նշանաւոր արդիւնք է։ Այս տարի պտուղներ ազէկ գին բռնեցին, Սպանիոյ մէջ հնտասի պատճառաւ, դի արդիկուած էր պտղոյ ներմուծումը. հետեւաբար չամիչ, նուշ և չոր պտուղներ կրկին գնով ծախուեցան։ Դիմենիի մը-մէկ արտին 1000 լիպրայ դրդում կրուած էր կովերը կերակրելու համար և մէկ ձմերուկի առնկէն 50ի չափ ձմերուկ առնուած է, որոց չատը 25 լիպրայէն աւելի կը կշռէին։ Ասոնք կը լրացուին հողին զօրութիւնը և արդիւնաբերութիւնը ցուցնելու համար։ 20ի չափ Հայ ողբքներ և աղջիկներ դպրոց կը յաճախեն և այս գաւառին մէջ Հայք իրրեւ հայ ազգի ճանչցուած և պատիւ ստացած են։

Մարզուանի Հայք որոնք մեծամասնութիւն կը կազմեն, շատ աշխատաւէր և գործունեայ են. այր կին և տղայք գործի կը մտնեն. սակայն եղողացիները անտարձ անձինք ըլլալով, մանաւանդ երկրագործութեան աշխատութիւնը յանձն առնելու ի սկզբան անյօժար ըլլալով, բաւական նեղուեցան այնպէս որ սկսան գղջալ և տրտնջալ և երկու ընտանիք իրենց առած երկիրները զրոյ չէին կարողացած մշակելու, խելով պատրաստուեցան կրկին իրենց հայրենիքը վերադառնալ. ահա այդ միջոցին էր որ այս անձինք գանգատանց և տրտնջանաց նամակներ գրեցին իրենց ազգակցաց ու հայրենիքը վերադառնալու փափաք ունենալնին ծանուցին. այս անձանց նամակներէն առիթ առնելով գաղթականութեան անհպատ անձինք սկսան հարուածել այս օգտակար ձեռնարկութիւնն Մ. Ասիի միջոցաւ նամակներ հրատարակելով և բոլորովին սեւ գոյնով ներկելով գաղթականաց վիճակը, առանց լիովին տեղեկութիւն ունենալու իրաց բուն վիճակին, մինչդեռ նոյն նամակները լրագրաց միջոցաւ հրատարակուած ատեն, անդին նոյն Եոզոատցիք տեսնելով իրենց մեծ սխալը և փոխելով իրենց դիտաւորութիւնը, քաղաքին մէջ դարձեալ տան համար եօթը բաժին երկիրներ գնեցին, տուներ շինեցին և այժմ բոլորովին հաստատուած ու շատ գոհ են։

***

Ս ԲԱՆԹԵՂՈՆ
ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՆՈՐԱՁԵՌՈՒԹԵԱՆՑ
ԳԱԼԱԹՈՓՈՒԼՈ
ԵՎ ԳԱՒԱՌՔ
394—Բերա, Մեծ-փողոց—394

Գալաթոփուլը եղբարք պատիւ ունին ծանուցանել Հասարակութեան, թէ յառաջիկայ Դեկտեմբեր ամսոյ մէջ մտադիր լինելով վերջնապէս իրենց վաճառատունը փոխադրել Կալաթա Սէրայի Կայսերական Լիսէի դիմաց թիւ 206 ընդարձակ չէնքն, զոր արդէն վարձած են, և ուզելով կարելի եղածին չափ շուտ ձեռքէ հանել իրենց ստացած նորաձեւութեանց մթերներն, այս նպատակաւ զգալապէս նուազեցուցած են իրենց ամէն ապրանաց, մանաւանդ նոր մանուածոց և հանդերձեղինաց գէներն, և Հոկտեմբ. 28 Երկուշաբթիէն սկսած են զեղչեալ գներով արտասովոր վաճառում մը։

Հասարակութիւնն որ միչտ պատուած է Գալֆօքուլը եղբարց Վաճառատունն իւր վստահութեամբ, վստահ լինելով անոր գըտնել փափաքելի առաւելութիւններն, ի նըկատ առնելով իւր ապրանաց ճոխ և բազմազան մթերքներն և միչտ գերազանց յատկութիւնն, այս վաճառման մէջ՝ բացի նոյն առաւելութիւններէն՝ պիտի գտնէ խիստ մատչելի և չափաւոր գներ։

Տե՛ս Դ. երես Սինկերի ճշմարիտ կարի մեքենայից ծանուցումը։

ԱԶԴ

Ուսմանց և լեզուաց հմուտ անձ մը կը փափաքի Զափագիտութեան և Անգլիարէնի այցելութեամբ դասախօսութիւն ընել տանց և վարժարանաց մէջ։

Խնդրողք պարտին դիմել Կ. Պոլիս Յակոբեան Խանը Սենեկապետ հաճի Դասպարին։

4—4

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Ա. ՊԱՐՏՕ
ԵՒ
ԱՍԱՐԳԻՍ Գ. ՁԻՒՐԵԱՆ

Երկար ատենէ ի վեր Կ. Պոլիս հաստատուած Գաղղիացի նշանաւոր փաստաբան պարոն Ա. ՊԱՐՏՕ կը յայտարարէ յարգել Հասարակութեան թէ այս անգամ Օսմանեան գաւառապետութեանց Համար իրեն Օգնական ընտրած է պարոն ՍԱ

հրաժեշտ մատոյց իրեն, իբր թէ Մատ. բիտ վերադառնալու համար։ Բայց իրօք հոն մնացին, քոյրի սենեկի մը մէջ, ուր մայրն, Մոնբանսիէք, և իր երկու քոյրեր Իզապէլլա և Եալսիա անցուցին ահռելի դիշերն, արթուն կենալով ու աղօթելով, և մեծ ճիգ ընելով որ իրենց լայուն ձայնը չլսուէր։ Կարդինալ Պէնարիտէս շատ աշխատեցաւ մխիթարելու արքայական զերդաստանը։

«Կէս դիշերէն 3 ժամ յետոյ, Ալֆոնսօ թագաւորելու նշաններ զգաց, և Տր. Բամիզնէ դեղ մը խնդրեց ընչաքաղցութեան դէմ։ Տրուած դեղն հանդարտեցուց զինք։ Քրիստինէ Թագուհին անկողնոյն գլուխը կը հսկէր։ Սենեկին մէջ բժիշկն և պալատական արաբողպետ Սէքսդօ դքսէն զատ ոչ ոք կար, որք ժամերուն ընթացքն անձկանօք կը դիտէին։ Ժամ 5 ին նոյն տագնապ շնչարգելութեան, և նոյն դեղ։

«Առաւօտն անձրեւոտ, ամպոտ եւ տխուր էր։ Արքայական զերդաստանին միւս անդամը հիւանդին սենեակը մտնելով Թագաւորը քիչ մը աւելի հանդարտ, բայց դժբախտաբար շատ տկար վիճակի մէջ գտան։ Տր. Բամիզնէ դուրս ելաւ, և Ն. Վեհափառութիւն իր երկու զաւակները տեսնելու փափաք յայտնած լինելով, հեռագրաւ հրաման տուաւ Մատիրիտ որպէս զի անմիջապէս զրկուին։ Բժիշկներն ոչ եւս կը ծածկէին արքայական ընտանիքին թէ տխուր վախճանը կը մերձենար չուտով, և Կարդինալ Պենարիտէս Թագաւորին ներկայանալով, կրօնային վերջին պարտաւորութեանց պատրաստուց զնա։ Ալֆոնսօ խոստովանեց և Ջերմեռանդօրէն, և արձակումն ստացաւ խորին լռութեան մէջ։ Մայր Թագուհին Իզապէլլա, Թագաւորին քոյրերն, Մոնբանսիէները, Սէքսդօ Դուքսն և այլ բարձրատիճան պալատականք ի ծունր իջած, կուլային լաւիկ։ Տիրոջ զեղիկ և աշխարհս տեսարան մ'էր այս, մինչ Պալատան միւս սենեկաց մէջ ամենուն դէմքին վրայ վիշտ և արգահատութիւն դրոշմուած էին։

«Կէս օրէն 3 ժամ և մէկ քառորդ առաջ, Թագաւորն, որ միշտ ձախ կողին վրայ հակած մնացած էր, տկար շարժմամբ մը դարձաւ ալ կողին վրայ, մեծ ճգմամբ մը շունչ առնելով, և գլուխն հակելով Քրիստինէ Թագուհւոյն ուսին, որ այդպէս յանգիստս ստացաւ իւր ամուսնոյն վերջին շունչը։ Տոգք. Բամիզնն և Ռիւեսել անմիջապէս պալատացոյս ներսն դարձան։ Վերջին շունչն աւանդած էր. շնչերակը դնեցին, և ողբալի եղելութիւնը նոյն վայրկենին գուժեցին արքայական ընտանեաց անդամներուն։ Երբ Քրիստինէ Թագուհին իմացաւ զիւր դառն կորուստ, անբացատրելի վշտի անսովոր աղաղակ մը թաւ չրժունչքն։ Արտասուք չթափեց. բայց գոչեց. «Ալֆոնսօ, իմ Ալֆոնսօ. ո՛չ, Տէր Աստուած, պատանխան չի տար. Ալֆոնսօ՛.» Մայր Թագուհին և նորա երկու աղջկունք բարձրաձայն կուլային. մայրը, ծունկի վրայ եկած մահճին քով, կ'աղաղակէր. «Զաւա՛կս, մա՛նչս, Սուրբ Աստուածածին, գթացէ՛ք։»

«Վշտալից զգացմանց այս առաջին պաթռմէն յետոյ, Մոնբանսիէի Դուքսն ու որդին սենեկէն դուրս տարին զՄայր Թագուհին և հանգուցելոյն քոյրերն. իսկ Քրիստինէ Թագուհին պնդեց ու մնաց, և իր իսկ ձեռօք յարդարեց ամուսնոյն մարմինը։ Սենեկին մէջ ասդին անդին կը շրջէր իբրև մարմարեայ դէմք մը լռին ոգով պատած, և երբ ամեն ինչ աւարտեցաւ, ծաղիկներ բերել տալով, մարմինն ու անկողինը զարդարեց անոնցմով, և ապա երկար ատեն ի ծունր իջած մնաց անկողնոյն մօտ, մինչեւ որ Պենարիտէս Կարդինալն ինք, յարմօսր շարժեալ ազեխաղչ տեսարանէն, թախանձեց Թագուհւոյն գուրս ելնել, և ընդունել զնախարարապետն ու նախարարներն, որք իրեն կ'սպասէին. ըստ որում իբրեւ խնամակալուհի Թագաւորութեան, իւր պարտքն էր նաև Պետութեան գործոց հոգ տանիլ։

«Թագաւորը պառկած կը մնար մեծ անկողնոյ մը մէջ, ի ձեռին ունենալով նոյն խաչն որ տարիներ առաջ տրուած էր իրեն ի Հռոմ, երբ կառնուր զիւր առաջին հաղորդութիւն։ Դէմքը նիհար էր, բայց շատ հանգարտ կերևէր, իբր թէ կը քնանար։ Վերջին շունչ տանդիէն քիչ յետոյ հասաւ Դքսուհի Մէյտինա Դորբէս, որ Մատրիտ կը կը բերէր Թագաւորին երկու աղջիկներն, զՄարիա Տէ Լաս Մէրչէտես, Իշխանուհին Ասպուրիայից, հնգամեայ, և զԹերեզա, երեքամեայ։ Թեզեռ տղեկները տարուեցան հոն ուր պառկած էր իրենց հայրը։ Կամաց կամաց կը բալէին սենեկին մէջ, վախնալով որ չարթնցնեն. զի ըսուած էր իրենց թէ հայրերնին կը քնանայ։ Ծանկարծ հընդգամեայ Իշխանուհին հարցուց. «Եթէ կը քնանայ, ինչո՞ւ գիրեր են այս ծաղիկներն». — «Որովհետեւ հայրիկը շատ կ'տառապի ծաղիկներէն, սիրելիս,» պատասխանեց Դքսուհին։ — «Ինանկ է նէ կամացուկ մը դուրս ելնենք որ հայրիկը չարթնայ», պատասխանեց միամիտ գահաժառանգուհին, և սենեկէն ելնելով գնացին իրենց մօր քով, ուր դառն վշտի ուրիշ սարսափելի տեսարան մը տեղի ունեցաւ։ Ի տես արքայազարմ երկու որբոց։ Ամենքն ալ լիշեցին թէ ժամանակ մը առաջ Թագաւորն որչափ կը սիրէր իւր զաւակներն, որոց հետ յաճախ ժամեր կ'անցուներ խաղալով Քրիստինէ Թագուհւոյն սենեկին մէջ, և վերջերս ալ, իւր հիւանդութեան ատեն, միշտ կ'ուզէր իւր սչաց առջեւ ունենալ զանոնք։»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ՄԱՆԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԹՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

ԷԶՄԻԱՆԻՆ, 9 Նոյմ.

Շարաթ երեկոյեան վանքի միաբանք զգեստաւորուած, խաչերով խաչվառներով, խնկամաններով ու բուրվառներով ժողովում են Վեհարանի գաւիթը, ուր Վեհափառ Հայրապետն ամպհովանու տակ ընդունելով «Հրաչափառ» շարականը երգելով գնում են եկեղեցի, «Իմման» Սեղանի առաջ Կաթողիկոսը կարգում է «Ուրախ եղէ» սաղմոսն և ապա սկզբում է երեկոյեան ժամագրութիւնը։ Սրանից յետ լինում է «եկեղէ» և սաւում է առաւօտեան ժամի մասը։ Կիրակի (այսօր) շարունակվում է առաւօտեան ժամը։ Պատարագը մատուցանում է Կաթողիկոսը, մասնակցութեամբ 12 եպիսկոպոսաց։ «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» խօսքերից յետ Հայրապետը ծունր է իջնում սեղանի առաջ և 12 եպիսկոպոսունք նրան շրջապատելով, սկսում են Օծման հանդէսը. Արիստակէս, Դէորգ, Ներսէս և Մկրտիչ Եպիսկոպոսները աղօթքներ և սաղմոսներ են կարդում, որից յետ 12 եպիսկոպոսունք ձեռքերը Կաթողիկոսի գլխին դնելով միասին ասում են «Մեք դնեմք զձեռս» աղօթքն։ Ապա Գրիգոր, Սէրովբէ, Թադէոս, Մեսրոպ, Յովակիմ և Երեմիայ եպիսկոպոսները կարդում են Մարգարէութիւններից և Գործ Առաքելոցից որոշած գրքերը։ Սուրբ եպիսկոպոսը կարդում է Աւետարանը, ասում է Հաւատոյ Հանգանակը և դուրս բերում Սրբութիւնը։ Ողջոյնից առաջ Գրիգոր և Մեսրոպ եպիսկոպոսունք ասում են «Աստուած մեծ», իսկ Մկրտիչ Եպիսկոպոսը ազօթքը կարդալից յետ առնում է Միւռոնի Աղաւնին, մերձենում է ծունր իջած Հայրապետին և երիցս կաթեցրնում Միւռոն նորա գագաթի վերայ, երգելով Առաքելոյ Աղաւնոյ շարակարը։ 16 Եպիսկոպոսունք մատով խաչի նշան են անում Կաթողիկոսի գագաթի վերայ, երգելով «Օրհնեսցէ, Օծցի և սրբեսցի գագաթ Տէր Մակար Կաթողիկոսի»։ Մկրտիչ Եպիսկոպոսը ծածկում է Կաթողիկոսի գլուխը քողով, գօտեւորում է Կոնքերով, և յանձնում է գաւազանը, շարականներ երգելով։ Ապա Արիստակէս, Դէորգ և Գրիգորիս Եպիսկոպոսունք կարդում են սաղմոսներ և առաքելոց գրքեր, իսկ Մեսրոպ Եպիսկոպոսը կարդում է ուտեստարան և ապա սկսվում է «Ողջոյնքն» որոյ ժամանակ Եպիսկոպոսունքը հմբուրում են Կաթողիկոսի գագաթը։ Կաթողիկոսը վերջացնում է պատարագը և եկեղեցական դասը շարական երգելով թափորով գնում է Վեհարան, ուր Կաթողիկոսը բաժնում է Գահի վերայ և բոլոր ներկայ եղողները առնում են նորա օրհնութիւնն և հանդէսը վերջանում է պահպանիչով։

(Մեղ. Հայաստան)

Տեղական թերթի մը իւր ուրբաթ աւուր թուով ծանուցած էր թէ, օսմանեան դատարանաց մէջ եկեղեցականաց վիճայութիւն տալու և երդում ընելու խնդիրը բարւոք կերպիւ լուծուած է Պատրիարքարանաց առաջարկութեանց համաձայն, այսինքն թէ կայս. Կառավարութիւնն ոչ թէ քան առաջնոյն ուղղակի յարաբերութիւն պիտի ունենար եկեղեցականաց հետ, այլ Պատրիարքարանաց միջոցաւ։ Թիչեալ թերթը ծանուցած էր նոյնպէս թէ աղգային հաստատութեանց և կալուածոց սեպհականութեան խնդիրն եւս Բ. Դրան մէջ խորհրդակցութեան առարկայ լինելով բարւոք լուծում մը ստանալու վրայ է։

Մեր առած տոյգ տեղեկութեանց նայելով, այս լուրը անհիմն են։ Եկեղեցականք ի հարկին դատարանաց պիտի ներկայանան վիճայութիւն տալու և երդում ընելու համար, վասն զի կայս. Կառավարութիւնն Օրինաց մէջ այս մասին ո՛ և է բարեփոխում կամ բացառութիւն չընդունիր, միայն թէ, եկեղեցականաց երդման ձեւին վրայ բանաձեւ մը պատրաստելու մասին բանակցութիւնք կը լինին։ Նոյնպէս աղգային կալուածոց և հաստատութեանց խնդրոյն նկատմամբ Բ. Դրան մէջ ո՛ և է պաշտօնական գործողութիւն եղած չէ ցարդ։

Կը յուսանք սակայն որ սոյն երկու կարեւոր խնդիրներն, օրինաց շրջանին մէջ և Աղգին բաղձանաց համաձայն բաղձանաց համաձայն լուծումը կը գտնեն։ Ինչպէս արդարասիրութեան կայս. Կառավարութեան և անխնդիր ջանից Ս. Պատրիարք Հօր՝ որ ամեն կերպով կ'աշխատի Աղգին բաղձանաց համաձայն կարգադրել այս և հասմանման խնդիրներն։

Կրօն. ժողովն իւր վերջին նստին մէջ որոշած է նկատողութեան առնուլ Շահնազարեան հոգեւոր Կարապետ վարդապետի Կանոն, որպէս զի Նուպար-Շահնազարեան Վարժարանի Կանոնամէջ պէտք եղածն ի գործ դրուի քան տարագրութեան լիչեալ Կրտակին։

Կը լսենք թէ Կիլիկիոյ Ամեն Կաթողիկոսը բողոք բարձած է առ Աղգ. Պատրիարքարանն, Շահնազարեան հոգեւոր Կարապետ վարդապետի կանոնին եղծման համար և խնդրած է որ գէթ Շահնազարեան Վարժարանի հոգ կարարիներն ու Բծնօլիտեները դրձնուն իրեն, որպէս զի կարենայ Սսոյ մէջ ժառանգաւորաց վարժարան մը հաստատել հաճաձայն Կանոնին ոգւոյն։

Այսօր խումբ մը երեսփոխանք Զալթիոյ Մատենադարանին մէջ գումարում մը կ'ունենան, երուսաղեմի Պատրիարքական ընտրութեան խնդրոյն վրայ նախնական խորհրդակցութիւն մ'ընելու համար։

ՃԱՇԱԿ

ՈՍԿԵԴԷՆ ԴՊՐՈՒԹԵՍՆ

ՀԱՆԴԷՍ Ա.ՈՍՕՐԵԱՑ

Պատմական, Գիտնական, Բանասիրական Ա.ՅԵՂԻՆ հանդէս

Ընդ խմբագրութեամբ Ա. Մաղաքիայ Գարագաշեան և Ն. Գալանեան

Ցառաջիկայ յունվար 1886 կը սկսի հրատարակուիլ Հանդէս հին հայերէն լեզուաւ. յօրինիչք են Տէրաբ Ե. Մ. Գարագաշեան և Ն. Գուրգէն, գործակցութեամբ այլոց հայերենագէտաց։

Նիւթք են պատմական, գիտնական, բանասիրական և այլն։

Տարեկան բաժանորդութեան դին է 25 դահեկան ոսկի կամ ռուբի։ Գաւառացի և օտար երկրի բաժանորդք կը վճարեն թղթատարի ծախքն, որ է տարեկան 6 դահեկան արծաթ։

Նոքա որ կը փափաքին լինել բաժանորդ Հանդիսիս՝ կարեն դիմել անձամբ կամ գրով առ գրավաճառ Յովսէփ Գաֆֆեան, Կ. Պոլիս, Զաղմագիրար, թիւ 20։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկրորդ կարգի Օսմանիէ պատուանշան տրուեցաւ յոյն սեղանաւոր Եէնիտունեա Տիմիթրաքի էֆէնտիին։

Մերիվիլայի ատրճան տրուեցաւ երրորդ զօրաբանակի գնդապետներէն Մահմուտ պէյի որ նոյն զօրաբանակի պատոյից ճիւղին նախագահ անուանեցաւ։

Արեւելեան Ռումէլիի կայսերական պատուիրակ և առժամեայ կուսակալ Ճէվտէթ փաշայի ուղեւորութիւնն լուսագրուած է առժամապէս։ Կը կարծուի թէ Ն. Վեհափառութիւն այն ատեն միայն պիտի ուղեւորի ի Փիլիպէ, երբ հաշտութիւն կնքուի ընդ մէջ Սերպիոյ և Պուլկարիոյ։

Հիւսէյին Հասիպ էֆէնտի, որ Նիհատ փաշայի տեղ կայսերական պատուիրակ կարգուած էր Պուլղարիոյ Վագբֆներու ծանուցեալ խնդրոյն համար, լուսագրած է իւր ուղեւորութիւնն ի Սոֆիա և բարձրագոյն հրամանաւ նմա յանձնուած է Կատպան էֆէնտի։

Այս առաւօտեան թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Լէպիպ էֆէնտի, իւր առժամեայ պաշտօնն աւարտած լինելով, մայրաքաղաքս վերադառնալու հրաման ստացած և արդէն իսկ մեկնած է Փիլիպէէն։ Կատպան էֆէնտի եւս ճամբայ ելած է և Սոֆիա պիտի ուղեւորի իւր նոր պաշտօնի գլուխն անցնելու համար։

Թանէթ անտոյդ կը համարի այն գրոյց թէ Կատպան էֆէնտի պաշտօն ունի Բ. Դրան ինչ ինչ առաջարկութիւններն հաղորդել Աղեքսանդր Իշխանին։

Նախարարաց Խորհուրդն ի նիստ գումարեցաւ երէկ և իրաց ներկայ վիճակին վրայ խորհրդակցեցաւ։ Կ'քսուի թէ Պ. Հիրշի հետ կնքուելիք փոխառութեան վրայ եւս խորհրդակցութիւնք տեղի ունեցեր են։ Այս խնդրոյն միայն մէկ կէտը խորհրդակցութեան կարօտ մնացած լինելով այդ մասին եւս այսօր Նախարարաց Խորհրդոյ մէջ խորհրդակցութիւնք տեղի պիտի ունենան։

Արտաքին գործոց Նախարարի խորհրդական Վսեմ. Տատեան էֆէնտի, պահ մը ներկայ գտնուեցաւ Նախարարաց Խորհրդոյ երէկի նստին։

Երէկ Ֆրանսական դեսպանն և գերմանական դեսպանատան խորհրդականը Բ. Դուռն երթալով, տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ, որ թէեւ Նախարարաց Խորհրդոյ նստին ներկայ կը գտնուէր, բայց առանձին սենեակ մը քաշուելով ընդունեց զանոնք։

Կրէտէի, Արշիպիղոսի Կղզեաց և Այտընի նահանգաց մայրաքաղաքիս գործակատար (Բէյ-ոլլու-էֆէնտի) Նէպիլ էֆէնտիի յանձնուեցաւ նաև Սուրիոյ նահանգին գործակատարութիւնն։

Իսկ Սուրիոյ նահանգին մայրաքաղաքին նախկին գործակատար Սըրրի էֆէնտի Այտընի գործակատար անուանեցաւ։

Ճէվտէթ փաշա շաբաթ օրը Բ. Դուռն երթալով պահ մը ներկայ գտնուեցաւ Նախարարաց Խորհրդոյ նստին և խորհրդակցութեանց մասնակցեցաւ։ Երէկ եւս Ն. Վսեմութիւնն կայս. Պալատը գնաց։

Ռուսական և աւստրիական դեսպանք շաբաթ օր Բ. Դուռն երթալով, երկարօրէն տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

Վօն Տէր Կոլց փաշայի պայմանագրութեան պայմանաժամը լրանալու մօտ լինելով, թէեւ կը կարծուէր թէ Ն. Վսեմութիւնը Դերմանիա պիտի ուղեւորի, սակայն Հաքքէթ կ'քսե թէ կայս. կառավարութիւնը՝ գնահատելով Վօն Տէր Կոլց փաշայի արդիւնաւոր պաշտօնավարութիւնը, պիտի վերանորոգէ նորա պայմանագիրը։

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Բարձր. Սպարապետն երէկ առաւօտ Եըլտըզի պալատն երթալով, մինչեւ ժամը 3 մնդ. աշխատեցան։ Ապա, Մեծ-Եպարքոսը Բ. Դուռն գնաց, իսկ Բարձր. Ալի Սաիպ փաշա Սպարապետի Դուռն երթալով նախագահեց զինուորական տոմսավոր յանձնաժողովի նստին։

Կը կարծուի թէ ոչ միայն Գերմանիա և Աւստրօ-Հունգարիա, այլ և նոյն ինքն Ռուսիա համամիտ են այն մեծ Պետութեանց որք սա կարծիքն ունին թէ օսմանեան զօրաց կողմէ Պալքաններու դրաւումն անհրաժեշտ դարձած է սեպտ. 18ի յեղափոխութենէն ի վեր։ Արեւ. Ռումէլիի, Պուլկարիոյ և Սերպիոյ մէջ տեղի ունեցած դէպքերէն յետոյ։

Մահմուտ կ'իմանայ թէ Տէվրիշ փաշա հրաման ստացած է պատրաստ գտնուիլ առաջին հրամանին մեկնելու, չգիտցուիր ո՛ր կողմ։

Զալթիոյ հրապարակին վրայ զբրոյց մը կը շրջի թէ, օսմանեան արժեւտեսաց ֆրանսական նախկին պատուիրակ Պ. Վալֆրէյ՝ որ Պ. Կոչքնի հետ ստորագրեց 1881 դեկտ. 20ի պայմանագիրն, մայրաքաղաքս պիտի գայ ի մօտոյ։

Կը կարծուի թէ Պ. Վալֆրէյի այս ուղեւորութիւնն առնչութիւն ունի Օսմ. Բէյիի ընկերութեան և երկաթուղեաց գծերու միացման վերաբերեալ խնդրոյ հետ։

Ճէվտէթ փաշայի պատուիրակութեան ընկերանալու պաշտօն ունեցող անձանց մէջ կը յիշուի Լօվաֆի (Պուլկարիա) հարուստ ագարակատէրներէն Միլէյման պէյ, որ տեսակ մը ցեղապետ է Ակօշ աղա անուանի ճանչցուած։ Մեծ համաւ և համարում կը վայելէ թէ ի Պուլկարիա և թէ յԱրեւելեան Ռումէլի։ Վերջին թուրքս-ռուսական պատերազմի միջոցին, Պուլկարիոյ բոլոր ագարակներն աւարի տըրուած էին, ի բաց առեալ Ակօշ Աղայի ագարակներն որուն ձեռք չդպցուցին։ Այս պարուս եւ, Ակօշ Աղա մեծ ազդեցութիւն ունի թէ Պուլկարաց եւ թէ Իսլամաց վրայ։

Ճէվտէթ փաշայի պատուիրակութեան պիտի ընկերանայ նաեւ ֆրանսերէն լեզուի համար քարտուղար մը։ այս պաշտօն յանձնուած է Արտաքին գործոց Նախարարութեան օտար թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Սամի պէյի։

Ներքին գործոց Նախարար Վսեմ. Միւնիր փաշայի ամուսինը Նախընթաց իրիկուն մեռնելով, յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ երէկ մեծ շքով։

Սերպիական դեսպանն և պուլկարական գործակատարը շաբաթ օր Բ. Դուռը հրաւիրուելով տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

Վեհ. Սուլթանին հրամանաւ Կիւմիւճինայի մէջ գտնուած արքունի կալուածներէն Պորու-Կէօլի-Տաղեանը կոչուած ջրանցքին վրայ երկաթեայ կամուրջ մը պիտի շինուի որոյ ծախքը պիտի վճարուի Կայս. անձնական գանձէն։

Պաղատի Նաքիպ-Իւլ-Էշրէֆ էֆէնտի՝ որ մէկ երկու տարիէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուի իբր հիւր Վեհ. Սուլթանին, Պաղատի մէջ 40ի չափ տի և 300 ոսկի հանգանակել տալով նուիրած է ի նպաստ կայս. բանակաց։

Սոֆոֆ կը հերքէ շաբաթ աւուր իւր հրատարակած այն լուր թէ, Հօպ փաշա մանաւոր պաշտօնով Աղեքսանդրը իշխանին քով պիտի զրկուի։

Հաքքէթ ծանուցանելով թէ Կրէտէի մէջ շատ մը կեղծ մէճիտիէներ շրջաբերութեան հանուած են, ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ։

Կը յիշուի թէ Ադրիանուպոլսոյ գաւառին հանրօգուտ շինութեանց տնօրէն Ֆասօ էֆէնտի պաշտօնակ եղած և գատի ենթարկուած էր, ամբաստանուած լինելովթէ իւր հսկողութեան յանձնուած քանի մը շինութեանց յատկացեալ գումարներ իւրացուցած է։ Արդ, հանրօգուտ շինութեանց նախարարութեան կողմէ տեղւոյ վրայ քննութիւն մը կատարուելով, տեղեկագիր մը զրկուած է ի Կ. Պոլիս, որ կը յայտնէ թէ կարելի չէ տարակուսիլ Ֆասօ էֆէնտիի խնամոց յանձնուած շինութեանց ամբութեան վրայ, թէ այդ շինութիւնք՝ որք իբր պատրուակ բռնուած էին յիշեալ պաշտօնատարի դէմ եղած ամբաստանութեանց համար, արհեստական տեսակետով շատ կատարեալ էին, և թէ հետեւաբար՝ և է աւելորդ ծախք չէ եղած։ Տեղեկագիրը կ'եզրակացնէ որ Ֆասօ էֆէնտի անպարտ արձակուի և վերահաստատուի իւր նախորդ պաշտօնին մէջ։

Միջերկրականի ֆրանսական նաւատորմի երկրորդ բաժանումն հրաման ստացած է կազմ և պատրաստ գտնուիլ, առաջին հրամանին ծունկատանի ի ներքոյ երթալու համար։ Այս նաւատորմ կը բաղկանայ երեք զրահաւորէ և մէկ մարտանաւէ, ընդ հրամատարութեամբ գեր-ծովակալ Բալլիէի։

Պուլկարէն նոյեմբ. 1830 թուով կը գրեն առ Նեսրլլա։

Քաղաքիս աւտրիական գեր-հիւպատոսն իւր պաշտօնակցաց մէջ առաջինն լինելով այսօր հեռագրաւ հրահանգ ստացաւ Կ. Պոլսոյ դեսպանէն, այն ուղղութեան նկատմամբ որուն պարտի հետեւիլ իրաց նախկին վիճակի վերահաստատման համար ի մասոյ գործադրելի որոշմանց առթիւ։ Պ. Քարիէէ կը ծանուցանէ Պ. Ատէլպուրկի, թէ Բ. Դրան կողմէ պատգամաւորք կը զրկուին Սերեա. Ռումէլի, հրաւիրելու համար տեղւոյն ժողովուրդն որ հնազանդի գերիշխան պետութեան և օրինաւորութեան ճանաչումի մէջ մնալ, համաձայն եւրոպական Տէրութեանց Կ. Պոլսոյ դեսպանաց ուռած որոշման։ Դեսպանը միանգամայն կը յանձնարարէ հիւպատոսին՝ իւր այս հրահանգներն հաղորդել տեղւոյն իշխանութեանց, ըստ կարելւոյն այժ տալ վերոյիշեալ պատգամաւորաց ձեռնարկներուն և դիւրացնել անոնց խաղաղարարական գործողութիւններն առաջի իշխանութեան և ժողովրդեան։ Պ. Ատէլպուրկ պաշտօն ունի միանգամայն Դերմանիոյ ներկայացուցիչ լինել ի Պուլկարիա, այս մի և նոյն հրահանգներով։

Դեր-հիւպատոսը միջօրէին քաղաքապետ Պ. Զանքոֆի ներկայանալով, հեռագրոյն բովանդակութիւնն հաղորդեց նմա։ Քաղաքապետը պատասխանեց թէ ինք տակաւին այս մասին հրահանգ ստացած չլինելով, պարտաւոր էր իւր պետերուն դիմել։

Թղթատարական վարչութիւնը կը ծանուցանէ թէ Ատանայի Կիւլար գաւառակին մէջ նամակատուն մը բացուած է, ուր պարզ և յանձնարարեալ նամակներ կընդունի։

Տակաւին մանրամասն տեղեկութիւնք չեն հասած Պաղատի թղթատարին կոչնչման դէպքին վրայօք։ Թղթատարական վարչութիւնն հեռագրաւ հրահանգ զրկած է ի Պաղատ մանրամասն տեղեկագիր մը զրկել իրեն։ Միւս կողմէ, տեղական իշխանութիւնք բազմաթիւ զօրքեր զրկած են թղթատարը կողոպտող աւազակաց ետեւէն։

Ա-Եւորոպան Լլոյդէն այս աւուր թուոյն մէջ կը գտնենք հետեւեալ լուրերը.

Մէրսին-Ատանայի երկաթուղեաց Ընկերութեան վարչութիւնը ծանուցած է Հանրօգուտ շինութեանց նախարարութեան, թէ լիչեալ երկաթուղոյ Մէրսին-Թարսուսի ման աւարտած լինելով, պիտի կրնայ բանիլ. իսկ մնացեալ ման՝ ան է Թարսուս-Ատանայի գիծը պիտի աւարտի յառաջիկայ գարնան։

Նոյեմբերի առաջին կիսամսեայ մէջ օսմանեան ծխախոտի վաճառման հասոյթք հասած են 53,870 ոսկւոյ, մինչ նախորդ ամսոյ միեւնոյն ժամանակամիջոցի հասոյթք եղած էին 58,000 ոսկի։ Նոյեմբերի առաջին կիսամսեայ մէջ Բէյթին Թուրքիէն դուրս զրկած է 506 ոսկւոյ ծխախոտ։

Տերքոսեան ջրի ընկերութիւնքներկայ տարւոյ նոյեմբերի 30ին ունէր ընդ ամենն 2003 բաժանորդք, մինչ անցեալ տարի միեւնոյն թուականին իւր բաժանորդաց թիւն էր 47։

Առեւտրական պաշտօնատան մէջ կազմեալ Որթալուիճի ջնման Ծանն. ժողովն իւր տեղեկագիրը մատուցած լինելով առ որ անկ է, տեղեկագրին եզրակացութիւնք կայսերական վաճառական մատուցուած են։

Վերջին երկու շաբաթուան մէջ Սպարապետի Դուռը պայմանագրեր կնքեց հետեւեալ պիտոյից մատակարարութեան համար. 6 միլիոն քիլօ աւիւր, ատորին տեսակէ, քիլօն 42 փարայի. 300,000 քիլօ տեղական պիւրը, քիլօն 47 փարայի. 10,000 կանգուն ջրխ., կանգունը 19 զրուշի, 20,000 ասուի պարկ, հատը 3½ զրուշի և 2000 հատ ամերիկեան կտաւ, լիպրան 5½ զրուշի։

Պաղատի թղթատարէն վերջերս կողոպտեալ նիւթոց և դրամոց արժէքը կը կարծուի, ըստ ոմանց 7-8000 ոսկի և ըստ այլոց 12-13000 ոսկի։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ Յ'ԱՆԳԼԻԱ

Ա.ՀԱՏԱԿԱՆՔ ԿԸ ՑՈՒՂԵՆ

Ռիչմոնդ շաբաթ իրիկուն հեռաւեալն հաղորդեց մեզ.

Լոնտոն, 5 դեկտ. ջրբ. ասաս.

Երեսփոխանական Ընդհանուր Ընտրութեանց արդիւնքն է մինչեւ ցարդ.

Ազատական՝ 233 Երեսփոխան
Պահպանողական՝ 228 »

Առաւելութիւն Ազատականաց ի վերայ Պահպանողականաց՝ 55 Երեսփոխան։

* * *

Լոնտոն, 5 դեկտ. ջրբ. երեկ.

Ազատական՝ 300 Երեսփոխան
Պահպանողական՝ 237 »
Բառնէլեան՝ 60 »

Առաւելութիւն Ազատականաց՝ 63։

* * *

ՀԱՎԱՍ այս առաւօտ հետեւեալ հեռագիրն հաղորդեց մեզ.

Լոնտոն, 5 դեկտ. ջրբ. երեկ.

«Արդիւնք Ընդհանուր Ընտրութեանց ցայս վայր.

Ազատական՝ 309 Երեսփոխան
Պահպանողական՝ 244 »
Բառնէլեան՝ 66 »

Գումար 619

Առաւելութիւն Ազատականաց ի վերայ Պահպանողականաց՝ 65 Երեսփոխան։ Մնացեալ անորոշ ամրոք՝ 55։

* * *

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ. 674 ընտրութեանց 619ը լմնցան։ Բառնէլեանց վերջնական թիւը 80 կ'ենթադրուի։ որով անորոշ ընտրութեանց թիւն է միայն 41։

Եթէ վերջին աւուրց համեմատաբար թիւնք նոյն մնայ, միայն Ազատական. ներուն թիւը հաւասար պիտի լինի Պահպանողականաց և Բառնէլեանց միացեալ թիւերուն. որով անտարակուսելի է Լորտ Սալիսբրիի նախարարութեան անկումն և Պ. Կլատստոնի և իւր նախկին պաշտօնակցաց վերադարձն իշխանութիւն։

ԱԺԱՆԻ ՀԱՎԱՍ

(Ա-----ի հեռ.)

Պերլին, 1 դեկտ.

Բիրոդէն առնուած վերջին լրոց համաձայն, Ալէքսանդր իշխանը ծանուցած է Պելկրատի ատարիական դեսպան կոմ Թէլէկիին, որ կը միջամտէ խաղաղութեան վերահաստատման համար, թէ իւր առաջին պայման կը պահանջէ որ Սերպիա ճանչէ իւրաց նոր վիճակն ի Պալքանս և հաւանի պատերազմական տուգանք մը վճարելու։ Մինչեան թագաւորը կը մերժէ։ կը թուի թէ որոշած է շարունակել պատերազմը։

Կը հաստատուի թէ Հիւսէյնէն տեղեկութիւնք ձեռնարկեր կ'ընեն Թուրքիոյ մօտ որպէսզի ի հարկին զինուորական միջամտութեան Պալքանաց հարաւակողմն (Արեւելեան Ռումելի)։

Լոնտոն, 1 դեկտ.

Երկրայելի է թէ զինադադարը կարենայ հաստատուիլ Սերպիոյ և Պուլկարիոյ միջև, որովհետեւ Ալէքսանդր իշխանը դրամատուգանք մը կը պահանջէ, ինչպէս և Բիրդի և Զայչարի գրաւումն իւր ազատագրութիւն վճարման։ Զինուորական պատրաստութիւնք ընդարձակապէս կը յարուցանի ի Սերպիա։